ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

# ԾՐԱԳԻՐ

Կազմեց համայնքի ղեկավ[illegible] Ա. Մ Ո Վ Ս Ի Ս Յ Ա Ն

Հաստատվել է համայնքի ավա[illegible] 2[illegible].2016թ. թիվ 47 -Ն որոշմամբ

ՄԱԼԻՇԿԱ 2016Թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ------------------------------------------------------------------------------------3

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ........................................................................4

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ..................5

3.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն.......................................................................5

3.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը ..............................................................7

4. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.............................................11

4.1 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն.........................................................................................................................11

5. ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ..................................12

6. 2017-2021ԹԹ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓԱԳԻՐ-----------------------------------------------------13

7 ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ-21

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՀ համայնքների զարգացման ծրագրի «ՀԶԾ» նպատակը համայնքի տնտեսության զարգացման հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում գործողության մեջ: Այն ներկայացնում է համայնքի տարածքում տեղաբաշխված ողջ տնտեսության համալիր զարգացման հեռանկարները, ներառած ՏԻՄ-երի իրավասիությունից դուրս գտնվող օբյեկտների զարգացումը ՀԶԾ-ն ընդհանուր առմամբ կոչված է ճշտելու համայնքում ռեսուրսներն ու պահանջմունքները:

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂՂԵՐՁԸ

Տեղական ինքնակառավարման մարմինները ժամանակակից բարդ և փոխկապակցված աշխարհում համայնքի զարգացման և հանրային ծառայությունների մատուցման միջոցով համայնքային կարիքների բավարարման գործառույթները արդյունավետ իրականացնելու, իրենց վերապահված լիազորությունների սահմաններում համայնքի առջև ծառացած խնդիրներին ծրագրային և համակարգված մոտեցումներ, լուծումներ տալու համար պարտավոր են իրականացնել հեռանկարային ռազմավարական պլանավորում:

Այդ նպատակների իրականացմանն է միտված Մալիշկա համայնքի զարգացման ծրագիրը: Այն իր մեջ ներառում է համայնքի ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծությունը, համայնքի ներուժի, ուժեղ և թույլ կողմերի գնահատականը, զարգացման ռազմավարական ուղղությունները, մատուցվող ծառայությունների որակի բարձրացման և աշխարհագրության ընդլայնման ծրագրերը:

Համայնքի զարգացման ծրագրի հիմնական նպատակն է իրականացնել ՏԻՄ-երի առաքելությունը՝ բարձրացնել համայնքի բնակիչների կյանքի որակը, բարեկարգել և բարելավել նրանց կենսագործունեության միջավայրը, համայնքի բնական հարստությունը և պատմամշակութային ժառանգությունը ծառայեցնել համայնքի կարիքների բավարարմանը՝ նպաստելով համայնքի ներդրումային գրավչության բարձրացմանն ու բարենպաստ բիզնես-միջավայրի ձևավորմանը:

Որպես ժողովրդավարական կառույց՝ համայնքապետարանը զարգացման ռազմավարական պլանը մշակել է համայնքի ավագանու անդամների, բնակիչների, հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ միասին:

# 3. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## 3.1 ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

**Մակերես՝** 83,30կմ$^2$

**Բնակչություն՝** 5315

Մալիշկա գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի կենտրոնական մասում, պատմական Մոզ քաղաքի հարևանությամբ: Մարզկենտրոն Եղեգնաձոր քաղաքից հեռավորությունը 7 կմ է: Գյուղը վերաբնակցվել է 1828-1831թթ. Իրանի Խոյ և Սալմաստ գավառներից ներգաղթված հայ ընտանիքներով: Այդ տարիներին վերաբնակեցվել է 42 ընտանիք, ներկայումս գյուղում ապրում են 1750 ընտանիք: Գյուղի վարչական տարածքը կազմում է 8330 հա, սահմանակից է Եղեգնաձոր և Վայք քաղաքներին, Գլաձոր, Վերնաշեն, Կարմրաշեն, Հեր-Հեր, Արին, Զեդեա և Ազարազաձոր գյուղերին: Բնակավայրը փռված է Արփա գետի աջ ափին, շուրջ 250 հա-ի վրա: Բնակչությունը հիմնականում զբաղվում է այգեգործությամբ և անասնապահությամբ: Գյուղում գործում է 2 միջնակարգ դպրոց, 2 մանկապարտեզ, մշակույթի տուն, առողջապահական կենտրոն, առուտրի 14 կետ, ոռվացուցիչ ջրերի 2 փոքր արտադրամասեր, ապահովված է խմելու և ոռոգման ջրով: Գյուղի գազաֆիկացված է, խորհրդային տարիներում գյուղում գործել է կոնդեսատորների գործարանը շուրջ 600 աշխատեղով, որը այնուհետև վերափոխվե է թանկարժեք քարերի մշակման և ոսկու վերամշակման արտադրամասի, սակայն այսօր չի գործում: Մշակույթի տանը գործում է գրադարանը, պարի, ըմբշամարտի, և ֆուտբոլի խմբակներ: Գյուղի տարածքով է անցնում Հայաստան Իրան միջպետական ավտոմայրուղին: Գյուղի տարածքը հարուստ է պատմամշակույթային հուշարձաններով, դրանցից են՝ նորակառույց Սուրբ Աննա եկեղեցին, գյուղի հին եկեղեցին, պատմական Մոզ քաղաքի դամբարանադաշտը, բազմաթիվ խաչքարներ: Գյուղում անցած դարում կառուցվել է երկու հուշարձան՝ Հայրենական մեծ պատերազմում զոհված Մալիշկեցիների հիշատակին, իսկ վերջերս կառուցվել է հուշաքար աղբյուր՝ Արցախյան պատերազմում զոհվածների հիշատակին:

Մալիշկայում ներկայումս գործում է սուրբ Աննա եկեղեցին, որի հարակից բարեկարգ տարածքը հարմարավետ հանգստի գոտի է դարձել բնակչության, առանձնապես երիտասարդների համար:

## 3.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքը բաղկացած է 1750 տնային տնտեսություններից, բնակչության թիվը 5114, որից տղամարդիկ կազմում են բնակչության 51%-ի:

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է:

1. Երեխաները (0—6տ) - 354
2. Դպրոցականներ (7-17տ) - 519
3. Թոշակառուներ - 993
4. Հաշմանդամներ - 353
5. Նպաստառու ընտանիքներ - 193
6. Ընտրողների թիվը - 3748

## 3.3 ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Բնակչությունը հիմնականում զբաղված է գյուղատնտեսական գործունեությամբ: Բնակչության մի որոշ մասը աշխատում են բյուջետային հիմնարկներում (համայնքապետարան, դպրոցներ, ԱՊԿ), մի մասը ժամանակավոր աշխատում են շինարարական կազմակերպություններում (Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ), մի որոշ մասն էլ զբաղվում է մանր և միջին բիզնեսով (խանութներ, փոքր արտադրամասեր):

## 3.4 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղը ծովի մակարդակից գտնվում է 1260մ բարձրության վրա, վարչական տարածքը՝ 8564.37հա է:

Մեկ տնտեսության սեփականություն հանդիսացող միջին գյուղատնտեսական հողատարածքը 0.29հա:

### Հողատարածքների օգտագործման սխեման

| | |
|---|---|
| Համայնքի վարչական տարածք | 8564.37հա |
| որից | |
| Վարելահողեր | 504.86հա |
| Խոտհարկ | 68հա |
| Արոտավայր | 3786.9հա |
| Այլ հողեր | 3614.4հա |
| Խաղողի այգի | 49.4հա |
| Պտղատու | 5.7հա |
| Տնամերձներ | 229.42հա |
| Ջրեր | 150հա |
| Արտադրական մաս | `30հա |
| Գերեզմանատներ | 7հա |
| Դպրոցներ | 6հա |
| Հուշարձաններ | 0.6հա |
| Գյուղամիջյան փողոցներ | 44հա |
| Դաշտային ճանապարհներ | 87հա |

Համայնքի գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են խաղողի, պտղի և բանջարբոստանային կուլտուրաների արտադրությամբ, որը խիստ զգայուն է շրջակա միջավայրի նկատմամբ և մեծապես կախված բնության քմահաճույքից:

հավելված 1-ում պատկերված է համայնքի գյուղատնտեսության չափանիշները 01.01.2016թ-ի դրությամբ և կանխատեսումները հնգամյակի համար:

Հավելված 1

## Համայնքի գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքը

| հ/հ | Գյուղատնտեսական մշակաբույսեր | միավոր | 2015 | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հացահատիկ և հատիկաընդեղեն | ցենտներ | 1562.0 | 2075 | 2250 | 2500 | 2700 | 2800 |
| 2 | Կարտոֆիլ | --- | 1500 | 3325 | 3410 | 3500 | 3540 | 3620 |
| 3 | Բանջարեղեն | ---- | 10790 | 12950 | 13500 | 14100 | 14600 | 15300 |
| 4 | Բոստան | ---- | 400 | 820 | 850 | 870 | 880 | 890 |
| 5 | պտուղ | ---- | 4920 | 3768 | 5010 | 5120 | 5200 | 5230 |
| 6 | խաղող | ---- | 2800 | 610 | 2800 | 2850 | 2910 | 2950 |
| 7 | խոտ | ---- | 110000 | 110000 | 110500 | 111000 | 113000 | 116000 |
| 9 | ծղոտ | --- | 550 | 750 | 800 | 840 | 870 | 900 |

2016թ-ի հունվարի 1-ի դրությամբ համայնքում առկա է 1082 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից 433 գլուխ կովեր, 235 մանր եղջերավոր անասուն, 1067 մեղվա ընտանիք, 36 գլուխ խոզ և 2476 թև թռչուն:

Գյուղում արտադրվում է կաթ, միս, բուրդ, ձու, մեղր:

Համայնքում թերևս գյուղտեխնիկա կա (8 անվավոր տրակտոր և այլն), սակայն դրանք մաշված վիճակում են, որը հնարավորություն չի տալիս լիարժեք վար ու ցանք կատարել:

## 3-5. ՈՉ ԳՅՈՒՂՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՆԵՈՒԹՅՈՒՆ

Մալիշկայում գործում երկու զովացուցիչ ջրերի արտադրամաս, որտեղ զբաղված են 12 մարդ, կա 15 խանութ որտեղ զբաղված են 15 մարդ: Բնակիչները կարևորում են գյուղում նոր աշխատատեղերի բացում, ծրագրավորում ենք գյուղում բացել կարի արտադրամաս, որտեղ կաշխատեն 80-100մարդ, ծրագրավորում ենք նաև բանակցել<< Հայ կարպետ>>-ի հետ գյուղում, տնային պայմաններում կազմակերպել գորգագործությունը, գյուղի տարածքում նպատակահարմար է կառուցել սպանդանոց քանի որ գյուղը գտնվում է մարզի կենտրոնական մասում և մոտ է Հայաստան- Իրան միջպետական ճանապարհին, որտեղ և նոր աշխատատեղեր կբացվեն և կզարգանա

անասնապահությունը, գյուղմթերքների վերամշակման փոքր արտադրամասերի բացում, որը և նոր աշխատատեղեր կտա գյուղին և ավելի շատ գյուղ մթերքներ կարտադրվեն, ծրագրավորում ենք նաև բնակիչներին ներգրավել դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի դասընթացներին համայնքում փոքր սառնարանային տնտեսություններ ստեղծում և այլն, որի արդյունքում գյուղ մթերքները գյուղացին կարող է գյուղ մթերքներ սպառել և ավելի շատ արտադրել:

## 3.6 ԽՄԵԼՈՒ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ

Խմելու ջրի խնդիրը տարբեր է և կարելի է բաժանել երկու մասի, ներքին ցանց և «ջանի ջրագիծ»:

Խմելու ջիր ներքին ցանցի երկարությունը 47 կմ է, վերակառուցվել է 2011թ «ջանի ջրագիծ» -ը որը կառուցվել է 70-ական թվականներին, երկարությունը 32կմ է, որից 17 կիլոմետրը ազբոխողովակից է: Նախատեսվում է կառավարության կամ դոնոր կազմաերպությունների միջոցով վերանորոգել, այս ջրագծը ապահովում է արոտավայրերի ջուրը ոչ միայն մեր այլ հարևան գյուղերի համար, ջրագծի վերակառուցումը թե խմելու և թե ոռոգման ջրով կապահովի 90-ական թվականներից հատկացված 20 հա տնամերձ հողամասերը, որտեղ խմելու և ոռոգման ջրի բացակայության պատճառով մարդիկ ոչ մի գործնեություն չեն ծավալում, տարածքը վերածվում է արոտի:

Ոռոքման ջուր համայնքն ստանում է Վայք -Մալիշկա-եղեգնաձոր ջրատարից, գյուղի առուներից և Կեչուտ -Արին-Մալիշկա ջրատարով:

Համայնքի մոտ 32 հա հողատարածք գտնվում է Արփա գետի ձախ ափին հին առուն այլևս շահագործման ենթակա չէ, եթե կառուցվի նոր առու կիսախողովակներով, մոտ 3 կմ արդյունքում բնակչությունը կմշակի այդ 35հա հողը, «Կեչուտ- Վայք» ջրագծի տակ շուրջ 60ահ հողատարածք չունի ոռոքման ներքին ցանց:

## 3.7. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ

3-6-1. Գյուղում կրթական մակարդակը բարվոք վիճակում է: Գյուղն ունի 2 միջնակարգ դպրոց, որոնք վերանորոգվել են վերջին տարիներին, 2 դպրոցներում միասին սովորում են 470աշակերտ, դպրոցներն ունեն 67 աշխատող:

Գյուղում գործում է 2 մանկապարտեզ, ուր հաճախում են 120 երեխա, աշխատողների թիվը 24:

Մանկապարտեզներից մեկը ունի տիպային շենք, որի երկու մասնաշենքերը վերանորոգվել են իսկ երրորդ մասնաշենքը, խոհանոցը և դահլիճը ենթակա է վերանորոգման, մյուսը տեղակայված է թիվ 1 դպրոցի 2-րդ մասնաշենքում, որը նույնպես հարմարեցման և վերանորոգման կարիք ունի:

1-6-2 Գյուղում գործում Առաջնային առողջության պահպանման կենտրոնը , շենքը շահագործման է հանձնվել2003թ-ին բարվոք վիճակում է, ապահոված է բուժ անձնակազմով, սարքավորումներով և շտապ օգնության ավտոմեքենայով:

Համայնքն ունի մշակույթի տուն, որը չի գործում, ունի հիմնովին վերանորոգման կարիք, որը կկազմի շուրջ 280.000.000 ՀՀ դրամ, գործում է գրադարանը:

1-6-3. Մշակույթի տան վերանորոգումը, որ նախատեսված է այս հնգամյակի ընթացքում, նոր շունչ կհաղորդի գյուղի մշակութային կյանքին, նորից կգործեն պարի, թատերական, երաժշտական խմբակները, համայնքը հնարավորություն կունենա կազմակերպել հասարակական միջոցառումներ, կինո, թատրոն, համերգներ:

1-6-4 Սպորտային կյանքը գյուղում աշխույժ է, մարզադպրոցում գործում են ըմբշամարտի երկու խմբակ, և ֆուտբոլի խմբակ: Առաջին երկու ձևերի պարապմունքներ անց են կացնում մշակույթի տան վերանորոգված դահլիճում, : Ֆուտբոլի պարատմունքները կազմակերպվում են դպրոցների մարզահրապարակներում:

## ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի 44կմ փողոցներից գազաֆիկացված է 42կմ,
Աղբահանությունը կատարվում է Եղեգնաձորի <<ԲԿՏ>> Ի կողմից, որը կարգավորված է:
Համայնքին խնդիր է նաև կոյուղու բացակայությունը և փողոցային լուսավորությունը, հնգամյա ծրագրի շրջանակներում ծրագրավորում ենք համայնքապետարանի և բարեգործների միջոցներով կառուցել փողոցային լուսավորության ցանցը:

## ՏՐԱՆՍՊՈՐՏ և ԿԱՊ

Մալիշկայի գյուղամիջյան ճանապարհների երկարությունը 48կմ է, որից 8կմ-ն հանրապետական նշանակություն է, գյուղի 42կմ փողոցներից ասֆալտապատ են 3-կմը:

Գյուղի կապը մայրաքաղաքի և մարզի քաղաքների հետ ապահոված է ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիներով:

հնգամյակի ընդացքում նախատեսվում է վերանորոգել գյուղի ճանապարհները, և ապահովել նորմալ երթևեկություն տրանսպորտային բոլոր միջոցների համար:

Գյուղում գործում է 1000 համարով հեռախոսացանց, որը նույնպես հնացած է և արդիականացման կարիք ունի:

# ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴ

Համայնքում կա 1045 առանձնատուն, բնակարանային ֆոնդը կազմում է 26400քմ: Բնակարանի կարիք ունեցող ընտանիքների թիվը 350 է, որը տարեցտարի աճում է, կան նաև բազմաթիվ կիսակառույց տներ, որոնք ներկա պայմաններից ելնելով մնացել են այդ վիճակում:

# Տ.Ի.Մ-մարմիններ

Համայնքի ղեկավարը 2002թ-ից Միեր Մովսիսյանն է: Վերջին անգամ ընտրվել է 2016թ-ի Հոկտեմբերի 2-ին, կայացած ընտրությունների արդյունքում 2 թեկնածույի դեպքում իր օգտին է քվյարկել ընտրողների 91%-ը: Ավագանին կազմված է 9 հոգուց որոնք նույնպես ընտրվել են 2016թ-ի Հոգտեմբերի 2-ին:

Աշխատակազմը բաղկացած է 13 հոգուց, , իսկ աշխատակազմի և ենթակառուցվածքների հետ միասին ապառատը բաղկացած է 47 հոգուց:

Համայնքապետարանի շենքը հիմնովին վերանորոգման կարիք ունի:

# ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒԴՋԵՆ

Համայնքի բյուդջեն պատկերված է հավելվածներում:

Հավելված 2

| հ/հ | Համայնքի բյուջե ըստ տարիների | միավոր | 2015 | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Համայնքի բյուջե եկամուտներ | Հազ. դրամ | 106309.5 | 106281,1 | 119442,1 | 122130,3 | 122900.0 | 123200.0 |
| 2 | Սեփական եկամուտներ | Հազ. դրամ | 9616.8 | 10512.4 | 12184.4 | 12450.0 | 12800.0 | 13200.0 |
| | | | | | | | | |

# 4. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐՔԻՆ և ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## 4.1 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

| ներքին | |
|---|---|
| ուժեղ կողմեր | թույլ կողմեր |
| • աշխատուժ, այդ թվում ԲՈՒՀեր-ի տարբեր մասնագիտության շրջանավարտ:<br>• միջպետական ճանապարհի մոտ գտնվել:<br>• թանկարժեք քարերի և ոսկու մշակման արտադրամասեր, որոնք չեն գործում:<br>• եկեղեցիներ, հուշարձաններ, պատմական Մոզ քաղաքի տարածքի խաչքարեր և այլն զբոսաշրջիկության համար: | • ներհամայնքային ճանապարհների վատ վիճակ:<br>• Մշակույթի տան անբավարար վիճակ:<br>• արտագնա աշխատանքների մեկնողների աճ:<br>• «Ձանի» ջրագծի անբավարար վիճակ:<br>• գործազրկության բարձր տոկոս: |

## 4.2 ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐ

| արտաքին | |
|---|---|
| Հնարավորություններ | վտանգներ |
| • երկրի և մարզի սոցիալ-տնտեսական զարգացում:<br>• փոքր և միջին բիզնեսի զարգացում:<br>• տարբեր ներդրումներ (դոնորներ, ներքին և արտաքին սփյուռք):<br>• ցածր տոկոսադրույքով գյուղ վարկերի ներգրավում:<br>• գյուղմթերքների տեղում մթերում, վերամշակում և արտահանում: | • բնական աղետներ (կարկուտ, երաշտ, ցրտահարություն, հեղեղումներ և այլն):<br>• արտագաղթի չափերի ավելացում:<br>• գյուղատնտեսական բույսերի և կենդանիների հիվանդությունների բռնկումներ: |

## 5. ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակում պատկերված հիմնահարցերը ըստ սրության դասակարգվել են:

1. Մանկապարտեզների շենքերի վերանորոգում
2. Արփա գետի ձախ ափի 32հա հողերի ոռոգման ջրի բացակայություն
3 .Փողոցային լուսավորության բացակայություն
4. Ներ համայնքային ճանապարհների վատ վիճակ
5. «Ձանի» ջրագծի 32կմ-ի վերակառուցում
6. Մշակույթի տան հիմնովի վերանորոգում
7 . 60հա հողերի համար ներտնտեսային ոռոգման ցանց բացակայություն
8. Կոյուղու բացակայություն
9. Դեպի Սուրբ <<ԱՆՆԱ>> եկեղեցի այնտեղից էլ Սուրբ<< ԽԱՉ>> վանք տանող ճանապարհների ոչ բավարար վիճակ
10. Համայնքապետարանի վարչական շենքի վերանորոգում (վթարային )

Հավելվածում ներկայացված է 2016-2021թթ-ի սոցիալտնտեսական առանձնահերթ ծրագրերի, միջոցառումների և աշխատանքների համառոտ ամփոփագիրը:

## 2017-2021ԹԹ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓԱԳՐԻ

## ԾՐԱԳԻՐ---1

### ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՄԵԿ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ < ԽՈՀԱՆՈՑԻ< ԴԱՀԼԻՃԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

90000000 դրամ Սոց հիմնադրամ, միջազգային դոնոր կազմակերպություններ, համայնքային բյուջեից համաֆինանսավորում

Ծրագրի հիմնավորում. Մանկապարտեզի երկու մասնաշենքերը սոց հիմնադրամի միջոցներով հիմնանորոգվել է, իսկ մի մասնշեշենքը , խոհոնոցը, դահլիճը, որպիսզի ժամանակակից խոհանոցում պատրաստվեն երեխաների համար ճաշերը, երեխաները վերանորոգված դահլիճում, և պատրաստվեն,և հանդես կազմակերպեն:

Ծրագրի նպատակը. Հիմնանորոգումից ժամանակակից խոհանոցում պատրաստվեն երեխաների համար ճաշերը, երեխաները վերանորոգված դահլիճում, և պատրաստվեն,և հանդես կազմակերպեն:

Ծրագրի խնդիրները. Պատվիրել և պատրաստել մանկապարտեզի կառուցման աշխատանքների նաղագծա-նախահաշվային փաստաթղթերը և ըստ նախագծի իրականացնել վերանորոգում:

Ծրագրի իրականացման ժամանակացույց

| | | 2017 | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հ/հ | Ծրագրի իրականացման գործողություններ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| | Պատվիրել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր | | | X | X | | | | | | | | |
| | Կազմակերպել մրցույթ և հաղթողի կազմակերպության հետ կնքել պայմանագիր | | | | | X | X | X | X | X | X | | |

Ակնկալվող արդյունքներ

Մանկապարտեզ հաճախող երեղաները կհաճախեն բարեկեցիկ մանկապարտեզ:

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

## ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՄԵԿ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ < ԽՈՀԱՆՈՑԻ< ԴԱՀԼԻՃԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակություն</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7">Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվաքանակի հարաբերությունը համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>60</td><td>60</td><td>85</td><td>85</td><td>85</td><td>85</td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1. Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվաքանակի հարաբերությունը համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>70</td><td>70</td><td>90</td><td>95</td><td>100</td><td>100</td></tr>
<tr><td colspan="7">2. Ծնողների բավարարվածությունը նախադպրոցական կրթությունից</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>Հիմն. բավարարված</td><td>Հիմն. բավ</td><td>բավ</td><td>բավ</td><td>բավ</td><td>բավ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. Մանկապարտեզի շենքի նորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում<br>1.2. Շինարարական աշխատանքների իրականացում<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. Ֆոկուս խմբերի շրջանում հարցումներ</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 0<br>Կապիտալ ծախսեր՝ 88000000<br>Ընդհանուր բյուջեն՝ 90000000</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Մալիշկա համայնքը ունի:</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">2-6 տարեկան երեխաներ և նրանց ծնողներ:</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2017-2018թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Չնայած ներկայումս Մալիշկա համայնքում մանկապարեզահասակ երեխաները հաճախում են մանկապարտեզ, սակայն խոհանոցի, դահլիճի անբավարար վիճակի և բնական աճի պայմաններում : Նման խնդրից խուսափելու, երեխաների առողջ ու անվտանգ ուսուցանվելու իրավունքն իրացնելու համար անհրաժեշտ է իրականացնել մանկապարտեզի հիմնանորոգում</td></tr>
</table>

# ԾՐԱԳԻՐ---2

## <<ՁԱԽ ԱՓԻ>>ՈՌՈԳՄԱՆ ԱՌՎԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

75000000 դրամ Ջրային պետական կոմիտե, միջազգային դոնոր կազմակերպություններ, համայնքային բյուջեից համաֆինանսավորում

Ծրագրի հիմնավորում. Համայնքի 160 շահառուներ չեն ոռոգում իրենց հողերը, 32 հա վարելահող գետի ափին չի ոռոգվում:

Ծրագրի նպատակը. 32հա վարելահող ապահովել ոռոգման ջրով, որպիսզի 160 սեփականատերեր կարողանան մշակել իրենց հողերը:

Ծրագրի խնդիրները. Պատվիրել և պատրաստել առվի կառուցման աշխատանքների նաղազծա-նախահաշվային փաստաթղթերը նախատեսելով LR 60կիսախողովակներ և կառուցել առվի գլխամասը :

Ծրագրի իրականացման ժամանակացույց

| հ/հ | Ծրագրի իրականացման գործողություններ | 2018 | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| | Պատվիրել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր | | | X | X | | | | | | | | |
| | Կազմակերպել մրցույթ և հաղթողի կազմակերպության հետ կնքել պայմանագիր | | | | | X | X | X | X | X | | | |

Ակնկալվող արդյունքներ

Կվոռոգվի 32հա վարելահող, սեփականատերերը կմշակեն իրենց հողերը, կզարգանա գյուղատնտեսությունը, բնակիչները կստանան եկամուտ:

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

## <<ՁԱԽ ԱՓԻ>>ՈՌՈԳՄԱՆ ԱՌՎԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Գյուղական բնակավայր ընդգրկող համայնքներում գյուղատնտեսության խթանում</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">3. Գյուղատնտեսությամբ զբաղվողների եկամտի տարեկան աճ</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>2</td><td>2</td><td>5</td><td>5</td><td>5</td><td>5</td></tr>
<tr><td colspan="7">4. Բերքատվության աճ</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>2</td><td>2</td><td>5</td><td>5</td><td>5</td><td>5</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. Ոռոգման առվի կառուցում և շահագործում<br>1.2. Բնակիչների շրջանում բացատրական աշխատանքի վարում արդյունավետ ոռոգման համար<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. Գյուղատնտեսական կուլտուրաների մշակման ագրոտեխնիկական կանոններին ծանոթացում<br>2.2. Հողերի ճիշտ մշակման, պարարտացման կանոններին ծանոթացում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 1.2 մլն դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 73.8 մլն դրամ<br>Ընդհանուր բյուջեն75.05 մլն դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Մալիշկա համայնքը և Եղեգնաձորի <<ՋՕԸ>>-ն ունեն:</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Մալիշկա համայնքի 160՝ գյուղատնտեսությամբ զբաղվող տնային տնտեսություններ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2017-2018թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Մալիշկա համայնքը ավանդաբար գյուղատնտեսության համար ունի լավ կլիմայական պայմաններ և բերրի հողեր: Ոռոգման առվի կառուցումը հնարավորություն կտա բնակիչներին զարգացնել գյուղատնտեսությունը և ակնկալել ավելի մեծ բերքատվություն և եկամուտ:</td></tr>
</table>

## ԾՐԱԳԻՐ---3

## ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

25000000 դրամ համայնքային բյուջե, դոնոր կազմակերպություններ, բարեգործներ.

1. Ծրագրի հիմնավորում. Համայնքի փողոցները հագեցված չեն փողոցային լուսավորությունով, որը անհարմարություն և դժվարություն է առաջացնում բնակչության համար:

2. Ծրագրի նպատակը. Կենտրոնական փողոցները դարձնել լուսավոր հարմարավետ բնակիչների և հույրերի համար:

3. Ծրագրի խնդիրները. Պատվիրել և պատրաստել լուսավորության անցկացման աշխատանքների նաղազծա-նախահաշվային փաստաթղթերը նախատեսելով 160 մետաղյա հենասույն 4,5մ բարձրությամբ 80մմ տրամագծով իրարից 40 մ հեռավորությամբ :

4.Կազմակերպել մրցույթ և հաղթող լիցենզավորված կազմակերպության հետ կնքել պայմանագիր վերը նշված աշխատանքները իրականացնելու համար:

Ծրագրի իրականացման ժամանակացույց

| | | 2018 | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| h/h | Ծրագրի իրականացման գործողություններ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| | Պատվիրել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր | | | X | X | | | | | | | | |
| | Կազմակերպել մրցույթ և հաղթողի կազմակերպության հետ կնքել պայմանագիր | | | | | X | X | X | X | X | | | |

Ակնկալվող արդյունքներ

Փողոցները կդառնան լուսավոր , անվտանգ ինչպես գյուղի բնակիչների այնպես էլ հույրերի

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

## ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
(Ծրագրի անվանում)

| | |
|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Գյուղական բնակավայր ընդգրկող համայնքներում գյուղատնտեսության խթանում |

**Ծրագրի անմիջական նպատակ**

| Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | | | | |

**Ծրագրի միջանկյալ արդյունքներ**

Համայնքի փողոցները հագեցված չեն փողոցային լուսավորությունով, որը անհարմարություն և դժվարություն է առաջացնում բնակչության համար:

| Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | 2 | 2 | 5 | 5 | 5 | 5 |

Փողոցները կդառնան լուսավոր , անվտանգ ինչպես գյուղի բնակիչների այնպես էլ հույրերի

| Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | 2 | 2 | 5 | 5 | 5 | 5 |

| | |
|---|---|
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. փողոցային լուսավորության ցանցի կառուցում և շահագործում<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1 Կենտրոնական փողոցները դարձնել լուսավոր հարմարավետ |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ 0.5 մլն դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 24.5 մլն դրամ<br>Ընդհանուր բյուջեն25.0 մլն դրամ |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Քանի որ ծրագիրը համայքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Մալիշկա համայնքը ունի: |
| Ծրագրի հիմնական շահառուները | Մալիշկա համայնքի բնակչություն և հույրեր |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2017-2018թթ. |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Մալիշկա համայնքի փողոցները կլուսավորվեն: փողոցային լուսավորության կառուցումը հնարավորություն կտա բնակիչներին ապրել ավելի բարեկեցիկ պայմաններում: |

## ԾՐԱԳԻՐ---4

### ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

70000000 դրամ համայնքային բյուջե, միջազգային դոնոր կազմակերպություններ, ՊԵՏ ԲՅՈՒՋԵ

1. Ծրագրի հիմնավորում. Շենքը վթարային վիճակում է,

2. Ծրագրի նպատակը. Համայնքապետարանի աշխատակիցները կաշխատեն հարմարավետ պայմաններում:

3. Ծրագրի խնդիրները. Պատվիրել և պատրաստել շենքի վերակառուցման աշխատանքների նաղազծա-նախահաշվային փաստաթղթերը :

3. Կազմակերպել մրցույթ և հաղթող լիցենզավորված կազմակերպության հետ կնքել պայմանագիր վերը նշված աշխատանքները իրականացնելու համար:

Ծրագրի իրականացման ժամանակացույց

| | | 2019 | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հ/հ | Ծրագրի իրականացման գործողություններ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| | Պատվիրել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր | | | X | X | | | | | | | | |
| | Կազմակերպել մրցույթ և հաղթողի կազմակերպության հետ կնքել պայմանագիր | | | | | X | X | X | X | X | | | |

Ակնկալվող արդյունքներ

- Համայնքապետարանի աշխատակիցները կաշխատեն հարմարավետ պայմաններում:

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

( Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Գյուղական բնակավայր ընդգրկող համայնքներում գյուղատնտեսության խթանում</td></tr>
<tr><td rowspan="3">Ծրագրի անմիջական նպատակ</td><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">Շենքը վթարային վիճակում</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>2</td><td>2</td><td>2</td><td>5</td><td>5</td><td>5</td></tr>
<tr><td colspan="7">Համայնքապետարանի աշխատակազմը գյուղի բնակիչների համայնքի բնակիչներին և հույրերին կսպասարկի հարմարավետ շենքում</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>2</td><td>2</td><td>2</td><td>5</td><td>5</td><td>5</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. փողոցային լուսավորության ցանցի կառուցում և շահագործում<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1 Շենքը կամրացվի և կվերանորոգվի</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 1.0 մլն դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 69.0 մլն դրամ<br>Ընդհանուր բյուջեն70.0 մլն դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Մալիշկա համայնքը ունի:</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Մալիշկա համայնքի բնակչություն և հույրեր</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2019թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Պատվիրել և պատրաստել շենքի վերակառուցման աշխատանքների նաղագծա-նախահաշվային փաստաթղթերը :<br>Կազմակերպել մրցույթ և հաղթող լիցենզավորված կազմակերպության հետ կնքել պայմանագիր վերը նշված աշխատանքները իրականացնելու համար:</td></tr>
</table>

## Հավելված 3

# ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ[1]

| Հ/ հ | Ցուցանիշներ | Չափի միավոր | 2016թ. փաստ. | 2017թ. կանխ. | 2018թ կանխ. | 2019թ. կանխ. | 2020թ. կանխ. | 2021թ. կանխ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Համայնքի վարչական տարածքը | հա | 8564.37 | 8564.37 | 8564.37 | 8564.37 | 8564.37 | 8564.37 |
| 2 | Բնակչության թիվը | հազ. մ. | 5114 | 5130 | 5160 | 5175 | 5190 | 5230 |
| 3 | Անհատական բնակելի տների թիվը | տուն | 1013 | | | | | |
| 4 | Անհատական բնակելի տների մակերեսը | հազ.քմ | 26.4 | | | | | |
| 5 | Տեղափոխվող աղբի քանակը | տոննա | 282 | 282 | 282 | ·282 | 282 | 282 |
| 6 | այդ թվում՝ բնակչությունից | | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 |
| 7 | Աղբավայրի առկայությունը և զբաղեցրած տարածքը | հազ.քմ | - | - | - | - | - | - |
| 8 | Սանիտարական մաքրման տարածքը | հա | 29 | 29 | 30 | 30 | 32 | 32 |
| 9 | Ոռոգման ցանցի երկարությունը | կմ | 70 | 72 | 74 | 80 | 82 | 85 |
| 10 | Ոռոգելի տարածքի մակերեսը | հա | 370 | 400 | 420 | 440 | 445 | 450 |
| 11 | Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը | կմ | 44 | 45 | 45 | 48 | 48 | 48 |
| 12 | Ներհամայնքային փողոցների և ճանապարհների մակերեսը | հազ.քմ | 396 | 400 | 400 | 410 | 410 | 410 |
| 13 | Առևտրի և ծառայությունների օբյեկտների թիվը, այդ թվում՝ | հատ | 15 | 15 | 16 | 16 | 17 | 18 |
| 14 | առևտրի օբյեկտներ | | 14 | 14 | 14 | 14 | 15 | 15 |
| 15 | ժ. 24-ից հետո աշխատող օբյեկտներ | | -- | | | | | |
| 16 | բենզինի լիցքավորման կետեր | | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 17 | գազի լիցքավորման կետեր | | -- | | | | | |
| 18 | Պահուստային հողերի օգտ. մակարդակը | % | 25 | 30 | 35 | 37 | 42 | 50 |
| 19 | Բնակարանի կարիքավոր ընտանիք. թիվը | ընտ. | 250 | 250 | 240 | 240 | 230 | 220 |
| 20 | փախստական ընտանիքներ | - // - | - | - | - | - | - | |
| 21 | բնական աղետից տուժած ընտանիքներ | - // - | - | - | - | - | - | |
| 22 | տեխնածին աղետից տուժած ընտանիքներ | - // - | - | - | - | - | - | -- |
| 23 | Նախադպրոցական հիմնարկների թիվը | հատ | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| 24 | զբաղեցրած հողատարածքը | հազ.քմ | 2.973 | 2.973 | 2.973 | 2.973 | 2.973 | 2.973 |
| 25 | շենքերի տարածքը | քմ | 893 | 893 | 893 | 893 | 893 | 893 |
| 26 | երեխաների թիվը | մարդ | 120 | 120 | 125 | 130 | 130 | 130 |
| 27 | խմբերի թիվը | խումբ | 4 | 4 | 4 | 5 | 5 | 5 |
| 28 | Հանրակրթական դպրոցների թիվը | հատ | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 29 | աշակերտների թիվը | մարդ | 470 | 478 | 482 | 490 | 495 | 505 |
| 30 | Մարզադպրոցների թիվը | հատ | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| •31 | երեխաների թիվը | մարդ | 70 | 80 | 80 | 90 | 90 | 100 |
| 32 | մարզաձևերի թիվը | հատ | 2 | 3 | 3 | 4 | 4 | 4 |
| 33 | խմբերի թիվը | խումբ | 3 | 4 | 4 | 4 | 4 | 4 |
| 34 | Մշակութային հիմնարկների թիվը | հատ | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 35 | Պոլիկլինիկա-ամբուլատորիաների թիվը | հատ | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 36 | այցելուների թիվը | մարդ | | | | | | |
| 37 | Սոցիալապես խոցելի ընտանիքների թիվը | ընտ. | 230 | 230 | 220 | 215 | 200 | 195 |
| 38 | Կենսաթոշակառուների թիվը | մարդ | 993 | 993 | 993 | 993 | 993 | 993 |
| 39 | Հաշմանդամների թիվը | մարդ | 353 | 353 | 353 | 353 | 353 | 353 |
| 40 | Փախստականների թիվը | մարդ | - | - | - | - | - | - |
| 41 | Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը | ընտ. | 193 | 193 | 193 | 193 | 193 | 193 |
| 42 | Համայնքի գերեզմանատների զբաղեցրած տարածքների մակերեսը | հա | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 |
| 43 | Սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտների մեջ | % | 9,05 | 9,8 | 10,2 | 10.3 | 10.4 | 10.5 |
| 44 | Համայնքի բյուջեի եկամուտների փաստացի կատարումը հաստատված պլանի նկատմամբ | % | 101.3 | 101.8 | 102.1 | 102.2 | 102.3 | 102.4 |
| 45 | Համայնքի բյուջեի եկամուտների փաստացի կատարումը ճշտված պլանի նկատմամբ | % | 101.3 | 101.8 | 102.1 | 102.2 | 102.3 | 102.4 |
| 46 | Համայնքի բյուջեի ծախսերի փաստացի կատարումը հաստատված պլանի նկատմամբ | % | 97.8 | 97.9 | 98.0 | *8.0 | 98.1 | 98.1 |
| 47 | Համայնքի բյուջեի ծախսերի փաստացի կատարումը ճշտված պլանի նկատմամբ | % | 97.8 | 97.9 | 98.0 | 98.0 | 98.1 | 98.1 |
| 48 | Համայնքի աշխատողների աշխատանքի վարձատրության ծախսերի տեսակարար կշիռը բյուջեի ընդհանուր ծախսերի մեջ | % | 52.6 | 52.3 | 46.7 | 46.8 | 47.0 | 48.5 |